ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1948 *Общественные науки*

ԴՐԱԽԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Н. М. Токарский „Архитектура древней Армении"

Издательство Академии Наук Армянской ССР. Ереван, 1946 г., 382 страницы, с 96 таблицами.

Հայկական ճարտարապետությունը հայ ժողովրդի գարավոր նյութական կուլտուրայի ամենահարուստ և ամենաբնորոշ բնագավառն է հանդիսանում և նրա պատմությունը շարադրելը վերին աստիճանի կարևոր և շնորհակալ, միաժամանակ դժվարին և պատասխանատու մի գործ է։ Դժվարին, որովհետև խոսքը վերաբերում է երկար դարերի ընթացքում ստեղծված մի խոշոր կուլտուրական ժառանգության, որը քիչ է ուսումնասիրված և բազմաթիվ չլուսաբանված հանգուցյալների հարցեր են կանգնելու ուսումնասիրողի առջև։ Պատասխանատու, որովհետև հարկավոր է հաղթահարել եվրոպական և տեղական գիտնականներից ոմանց հորինած հակագիտական, մոլորած-ավանդություններն ու տեսությունները և տալ մարքս-լենինյան մեթոդոլոգիայի ու պարտիականության սկզբունքով գրված մի լուրջ աշխատություն։

Ձեռնարկելով հայ ճարտարապետության պատմության սիստեմատիկ շարադրությունը, Ն. Տոկարսկին, սակայն, ինչպես հարկն է, չի հաղթահարել ոչ քննարկվող հարցի դժվարությունը, ոչ էլ, մանավանդ, պատշաճ պատասխանատվություն ցուցաբերել։

Հայկական ճարտարապետության վրա սկսեցին ուշադրություն դարձնել դեռ 19-րդ դարում, գիտելով այն կամ որպես քրիստոնեական կուլտուրայի բազկացուցիչ մասը և կամ իբրև հնում մեծ տերությունների հորիզոնի վրա երևացող կուլտուրա։ Եղան գիտնականներ, որոնք հակված էին հայկական ճարտարապետությունը գիտել որպես «քրիստոնյա կոլեկտիվիս» ինքնուրույն ստեղծագործություն։

Հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրությունը սկսվեց 20-րդ դարում, և ամենամեծ վաստակները այդ բնագավառում պատկանում են ակադեմիկոս Ն. Մարին, նրա՝ հետ աշխատակցած, ապա ինքնուրույն և անխոնջ կերպով իր ողջ գիտական գործունեությունը հայկական ճարտարապետության ուսումնասիրությանը նվիրած Թորոս Թորամանյանին։ Մշակվեցին հայ ճարտարապետության ուսումնասիրության գիտական սկզբունքները, երևան եկան մի քանի գիտական աշխատություններ և հոդվածներ։ Հետագա ուսումնասիրությունները պետք է հենվեին այս բնագավառում կատարված գրական աշխատանքի վրա և առաջ տանեին սկսված գործը՝ լուսաբանելով նախորդների վրիպումները ու թերությունները, ընդարձակելով ուսումնասիրությունների շրջանակը։ Մակայն բուրժուա-նացիոնալիստական հայագիտությունը և եվրոպական բուրժուական գիտությունը ձեռք ձեռքի տված՝ հայ ճարտարապետության պատմության համար էլ խոտորեցին հետապարշն էին պատրաստում։

Պատահական չէ, որ առաջին իմպերիալիստական պատերազմի և գերմանա-ավստրիական ագրեսիայի մոլուցքի տարիներին պատրաստվեց և 1918 թ. Վիեննայում լույս տեսավ լեհական սենեգալ և գերմանական բուրժուական արվեստագիտության կարկառուն ներկայացուցիչ Յոզեֆ Ստրժիգովսկու „Die Baukunst der Armenier und Europa" («Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան») երկհատոր աշխատությունը, որին վերապահված էր ոչ այնքան գրական, որքան բացասական դեր խաղալ։

Առաջին անգամ չէր, որ բուրժուական ուրեմուտքի գիտնականները հետևողական էին եղել Ալեքսիովկասի ժողովուրդների մեկի ազգային ինքնատիպությունը չընդունելու, մյուսներ՝ վիրավորելու և նրանց իրար հակադրելու քաղաքականությունը։

Ստրժիգովսկին հայկական կուլտուրան կտրելով Ալեքսիովկասի ժողովուրդների կուլտուրաներից և անտեսելով վրաց ճարտարապետությունը, հայկական չինարարական արվեստը հայտարարեց որպես ելակետ Եվրոպայի մի շարք երկրների ճարտարապետական մի քանի ձևերի առաջացման համար։ Դրանով Ստրժիգովսկին ուժեղ կերպով գրգռեց հայ բուրժուա-նացիոնալիստական շրջանների և նացիո-

նալիստորեն տրամադրված ինտելիգենցիայի ազգային ինքնասիրությունը։ Հայկական շրջաններում ստեղծվեց ազգային սնապարծության և սահմանափակվածության մի այնպիսի մթնոլորտ, որի առանձին դրսևորումները դեռևս իրենց զգալ են տալիս։

Այժմ, երբ սովետական ժողովրդի միասնական ընտանիքում վաղուց վերացված են բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսության առաջացման տխրահռչակ հիմքերը և ժողովուրդների իսկական բարեկամությունն է թագավորում, երբ կոմունիստական հասարակության կառուցման անցնելով մեզ մոտ վերացվում են կապիտալիզմի վերջին մնացորդները մարդկանց գիտակցության մեջ, բուրժուական նացիոնալիզմի ամեն մի ռեցիդիվ և նրա առաջացրած ամեն մի արձագանք, որը խախտում է լենինյան-ստալինյան պարտիական հետևողական մոտեցման սկզբունքը ազգային հարցում, միայն դատապարտության և արդահատանքի է արժանի։ Ընկեր Ստալինը Համկ(բ)Պ 17-րդ համագումարում տված հաշվետու զեկուցման մեջ ն.-ց. որ «Կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ շատ ավելի կենսունակ են ազգային հարցի բնագավառում, քան թե որևէ այլ բնագավառում։ Նրանք ավելի կենսունակ են, որովհետև հնարավորություն ունեն լավ թողարկվելու ազգային զգեստով»։[1]

Բուրժուական նացիոնալիզմին տուրք տվող ամեն մի բանակոիվ, որը, թեկուզ հեռավոր ձևով, հիշեցնում է ազգային անհաշտելիության և հակադրության բուրժուա-նացիոնալիստական գովարար իդեոլոգիան, սովետական քաղաքացու արդարացի զայրույթն է առաջացնում։ Ահա այդ տեսակետից միանգամայն դատապարտելի են Տոկարսկու գրքում տեղ գտած նացիոնալիստական տենդենցները և նրանց առաջացրած նացիոնալիստական կարգի վնասակար գրգիռները։

Տոկարսկու գրքում թույլ է տրվում հայկական և վրացական կուլտուրաների հակադրություն։ Այդ արտահայտվել է հակագիտական բնույթի և տենդենցիոզ մի բանավեճի վերականգնումով, մի վեճ, որի նպատակն է ցույց տալ ճարտարապետական ստեղծագործության որոշ ձևերի, մասնավորապես կենտրոնագմբեթ-խաչաձև տաճարների պրիորիտետը հայկական կամ վրացական ճարտարապետության մեջ։

Վիճարկելով պրոֆ. Դ. Զուրինաշվիլու (որն իր աշխատություններում նույնպես տենդենցիոզ մոտեցում է ցուցաբերում) տեսակետները այս հարցում, Տոկարսկին փոխանակ մերժելու Նախառևոլուցիոն շրջանից եկող և մեր օրերում դատապարտելի այդ վատառողջ, քաղաքական տեսակետից վնասակար տրամադրությունները, ինքը ևս իր հերթին տուրք է տալիս դրանց։

Կամենալով ցույց տալ, թե Մցխեթի տաճարը հայկական նույն տիպի շենքերից ավելի ուշ է կառուցված, Տոկարսկին ի թիվս «փաստարկների», կամարիկավոր թիվը հայտարարում է «տիպիկ հայկական» և իրավունք է վերապահում, որպեսզի Վրաստանում ընդօրինակեին այն։ Տոկարսկին գրում է. «Իր հայ եղբայրակիցներից ետ չի մնացել նաև ս. Խաչ եկեղեցու ճարտարապետը, տալով տուրք 30-ական թվականների մոդային և պսակելով իր ստեղծագործության գմբեթը տիպիկ հայկական թիվով» (էջ 92)։ Ընդգծումը մերն է— Բ. Ա. և Վ. Հ.)։

Հարց է ծագում։ Ինչո՞ւ է այդ թիվը «տիպիկ հայկական», երբ այն հավասարապես գործածելի է եղել թե՛ հայկական (Օձուն, Սրեն, Մաստարա և այլն), և թե՛ վրացական (Մցխեթի ս. Խաչ, Նեկեղեցի Դարբանի գյուղում և այլն) 6—7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանների վրա։ Իր տեսակետի օգտին Տոկարսկին վկայակոչում է նաև Վրաստանում Աթենի տաճարի կառուցման փաստը հայ ճարտարապետի կողմից և փոխանակ այդ փաստը դիտելու որպես երկու բարեկամ ժողովուրդների սերտ կապերի հետևանք, համարում է այն հայկական միակողմանի ազդեցության արդյունք։

Տոկարսկին վիճարկելով եկեղեցիների արտաքին նոանկյունի խորշերի առաջացման խնդիրը, ճիշտ կերպով եզրակացնում է, թե այդպիսի խորշեր մենք տեսնում ենք թ՛ վրացական, և հայկական վաղ հուշարձանների վրա։ Նշելով այդ, Տոկարսկին շարունակում է. «Այլ ներպ չէր էլ կարող լինել, քանի որ երկու երկրների վարպետները (որքան էլ որ ջանային հակառակն ապացուցել) անկասկած իրար հետ սերտ կապ էին պահպանում, որը վկայում է նույնատիպ շենքերի և հարդարանքի սյուժեների միաժամանակ երևան գալը այնտեղ և այստեղ» (էջ 93)։

Իհարկե վարպետների սերտ կապեր եղել են և նրանց նշանակությունը մեծ է. սակայն նկատենք, որ, նախ, միայն դրանով չեն բացատրվում կուլտուրական ընդհանրությունները, և ապա հարց տանք Տոկարսկուն, ինչո՞ւ նա նույն մոտեցումը չի ցուցաբերել Մցխեթի ս. Խաչ տաճարի թիվի և առավել ևս կենտրոնագմբեթ տաճարների թե Հայաստանում և թե Վրաստանում միաժամանակ երևան գալու նկատմամբ։ Նա զանց առնելով կուլտուրական ստեղծագործության պրոցեսի տեղողականու-

[1] Ի. Ստալին—Լենինիզմի հարցերը, Երևան, 1940 թ., էջ 379։

թյուններ տասնամյակներով միայն ետ ու առաջ տանելով այդ տաճարների կառուցման ժամանակը, վիճում է նրանց պրիորիտետի մասին։ Տենդենցն ակնհայտ է։

Նման վեճեր հարուցողները՝ փաստորեն հակադրում են իրար հայկական և վրացական կուլտուրաները։ Միաժամանակ նրանց հոգ չեն տանում լուսաբանելու հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը և սերտ կապերը, նրանց հասարակական զարգացման ֆեոդալական միանման միջավայրի ընդհանրություններով պայմանավորվող կուլտուրական ստեղծագործական միատեսակ մտահղացումների, ճարտարապետական ձևերի առաջացումը և ընդհանրությունները։ Մի հանգամանք, որի վրա բազմիցս նշել է ակադեմիկոս Ն. Մարը, «Հուշարձանների ընդհանուր գծերը,— գրում է Մարը,— օրինակ, հայկական և վրացական ճարտարապետության մեջ, կարող են բացատրություն գտնել թերևս ոչ այնքան մեկ կամ մյուս ժողովրդի փոխադարձ ազդեցությամբ, որքան այն աղբյուրների ընդհանրությամբ, որոնց մեջ բավարարություն էին գտնում, որոնցից դեղարվեստական ստեղծագործական ձևեր էին վերցնում հայ և վրացի վարպետները, որոնք ներշնչված էին միանման ֆեոդալական միջավայրի գեղարվեստական ազգակից իդեալներով։ Ընդհանրապես ազդեցության հարցը, ասենք հայկական արվեստի ազդեցությունը օտարների վրա, թե օտարներինը, օրինակ, մուսուլմանականի ազդեցությունը հայկականի վրա, երբեք չի կարելի ճիշտ որոշել, նույնիսկ այն դրվի խիստ պարզեցված ձևակերպումով, որը հաշվի չի նստում տեղական զեղարվեստական բազմաձևության, նրա մեջ եղած հոսանքների հետ՝ կախված մարզից, եկեղեցական հոսանքից, սոցիալական միջավայրից և սրա հետ կապված՝ հաշվի չի նստում այն դիալեկտիկական բովանդակության հետ, որը կարելի է դնել «հայկական ճարտարապետություն» տերմինի տակ»։

Այս ոգով առաջ տանելով կովկասագիտությունը, Մարը մերժեց հայկական և վրացական կզերա-բուրժուական, ազգայնական պատմագիտական կառուցումները և կովկասագիտության գիտական հիմունքները մշակեց։ Տոկարսկին ետ է մնում կովկասագիտության մակարդակից, նա չի հաղթահարել հայկական ազգային ավանդական պատմագիտությունը և տուրք է տվել բուրժուական նացիոնալիզմին։

Միանգամայն արատավոր է Տոկարսկու գրքի՝ «Տայքի ճարտարապետական դպրոցը 10-րդ դարում» խորագիրը կրող գլուխը։ Նախ պետք է ասել, որ հայ ճարտարապետության պատմությանը վերաբերող գրքում այս գլուխը անարդարացի և տենդենցիոզ կերպով է տեղ գտել, որովհետև 10-րդ դարում Տայքի ճարտարապետությունը հայկական չէր, կամ թեթև ինքնուրույն դպրոց չէր ներկայացնում, ինչպես պնդում է Տոկարսկին (էջ 202), այլ այդ դարում Տայքում և Կզարջքում (Տաո-Կլարջեթ) կարող է խոսք լինել միայն վրացական ճարտարապետական դպրոցի և վրացական ճարտարապետության մասին։ Իշխանի, Օշքի Տրեթքի, Խախուլի ճարտարապետական հուշարձանները վրաց ճարտարապետությանն են պատկանում։ Իզուր է Տոկարսկին հարց առաջադրում, թե արդյոք Խախուլի տաճարն, օրինակ, բաղկեդոնիկ հայերի համար չի՞ կառուցված։ Այն հանգամանքը, որ բաղկեդոնիկ հայերը կարող էին օգտվել այդ տաճարներից, չի կարող նրանց վրացական լինելը վնճի առարկա դարձնել։

Տոկարսկին աղավաղում է պատմությունը Տաո-Կլարջեթի ֆեոդալական ինքնուրույն թագավորության առաջացման հարցում։ Տոկարսկին կրոնադավանաբանական իդեոլոգիական մոտիվներով է բացատրում այդ թագավորության առաջացումը, նրա կապերը վրացական մյուս թագավորությունների հետ։ Իրոք այդ թագավորությունն իրենից ներկայացնում էր 9—10-րդ դարերում առաջացած վրացական ուղղափառ ֆեոդալական կազմավորում, որի մեջ մտնում էին և վրացական և հայկական տերիտորիաներ, ինչպես և վրացի և հայ ազգաբնակություն։ 10-րդ դարում պետական, քաղաքական և կուլտուրական հիմնական և առաջատար դերը այստեղ խաղում էին վրացիները, որոնց հետ ամենասերտ կերպով գործակցում էին և հայերը։

Տաո-Կլարջեթքական թագավորության պատմությունը հայ-վրացական բարեկամության և քաղաքական ու կուլտուրական սերտ կապերի գովելի օրինակ է տալիս։ Մի հանգամանք, որը բազմիցս ընդգծել է Ն. Մարը։[1]

Միևնույն պետության մեջ վրացիների և հայերի սերտ համագործակցության և օտար թուրք-թաթարական նվաճողների դեմ համատեղ պայքարի ավելի փայլուն և ավելի մեծ մասշտաբի օրինակ մեզ հայտնի է 12—13-րդ դարերի պատմությունից, երբ հայ ժողովուրդը նորից զրկված լինելով իր պետականությունից, ապավինեց հզորացող վրացական պետությանը և վերջինիս հովանավորությունը գտավ, երբ հայ ժողովրդի մի ստվար հատվածը վրաց ժո-

[1] Н. Я. Марр—Ани, Ереван, 1939 г., стр. 228.

[1] Օրինակ՝ „Батум, Ардаган, Карс исторический узел межнациональных отношений Кавказа", էջ 8 և այլն։

ղնությամբ ազատագրվելով Բյուզանդիայի լծից, միավորվեց վրաց պետության մեջ, ոչ թե որպես նվաճված ժողովուրդ, այլ բարեկամական դրացիական հարաբերություններով և կամովին։ Վրաց հզորացած պետությունն էլ Թամարա թագուհու ժամանակ ներքին ինքնուրույնությամբ արտոնեց վրաց պետության մեջ միավորված հայերին և վրացական պետության մեջ խոշոր պետական գործիչ հանդիսացող հայ Զաքարյան (Մխարգրձելի) եղբայրների իշխանության ժամանակամիջոցում։ Վրաց պետության և ժողովրդի վճռական առաջատար դերի պայմաններում հայերի ու վրացիների ռազմական և քաղաքական տնտեսական սերտ գործակցությունը մեծ օգուտներ բերեց երկու ժողովուրդներին էլ, մանավանդ հայ ժողովրդին։ Ահա այս բոլորի շնորհիվ է, որ 12—13-րդ դարերում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին տնտեսական կյանքի, քաղաքների ու քաղաքային կյանքի, ինչպես և կուլտուրայի, մանավանդ ճարտարապետության և գրականության զարգացման համար։

Ահա այս մեծ բարեկամության փաստերը Տոկարսկու գրքում վատ են լուսաբանված, իսկ տեղ-տեղ էլ (կուլտուրական համագործակցության հարցում, Տայքի նկատմամբ) թույլ են տրված երկու ժողովուրդների պատմության աղավաղման և հակադրության փաստեր, որոնք ամենախիստ դատապարտության են արժանի, ուր և ինչպիսի քողով էլ որ նրանք երևան գան։

Մառը բարձր էր գնահատում Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունն ու միասնությունը և հետևողական ինտերնացիոնալիզմի դիրքերից պայքարելով Կովկասի ազգայնական կոնցեպցիաների դեմ, պահանջում էր Կովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության և միասնության հիման վրա քննել և լուծել նրանց պատմության և կուլտուրայի հարցերը։

«Աղվանքի պատմությունը, Հայաստանի պատմությունը, Վրաստանի պատմությունը, լոկ ազգային պատմությունը չէ նշված յուրաքանչյուր երկրի, այլ ամբողջ Կովկասի պատմությունը և միևնույն ժամանակ չի կարելի հասկանալ Կովկասի պատմությունը պատմական առանձին կառուցումների շրջանակներում։ Չի կարելի առանց պատմական ընդհանուր պրոցեսը հաշվի առնելու, ծավալել յուրաքանչյուր ժողովրդի առանձին պատմությունը»[1]։

Տոկարսկու գրքի մեթոդոլոգիական հիմնական սխալները նշելուց հետո, այժմ տեսնենք, թե ինչ չափով է հաջողվել հեղինակին լուծել հայ ճարտարապետության պատմության մի քանի հանգուցային հարցերը։ Պետք է նշենք, որ Տոկարսկու աշխատությունը, հայ ճարտարապետության մոտ մեկ հազարամյակի պատմությունն ընդգրկող քիչ թե շատ ամբողջական գործ հանդիսանալով, ուշադրության արժանի է։ Տոկարսկու գրքում փաստորեն առաջին անգամ փորձ է կատարված շարադրելու հայ ճարտարապետության սիստեմատիկ տեսությունը, ընդգրկելով այնպիսի հուշարձաններ, որոնք նախորդ ուսումնասիրությունների մեջ կամ չեն ընդգրկված, կամ նրանց մասին կցկտուր տեղեկություններ տրված են զանազան շրջանների պարբերական մամուլում։ Սակայն Տոկարսկու աշխատության թերությունները զգալի են նաև հայ ճարտարապետության պատմության հանգուցային հարցերի լուսաբանության ընագավառում։

Առաջին տպավորությունը, որ ստանում է գրքի ընթերցողը, այն է, որ հեղինակը հանդես է բերել պարսավանքի արժանի շտապողականություն։ Հապճեպությունը յուր կնիքն է դրել աշխատության վրա բոլոր տեսակետներից։ Հապճեպ և խակ մտքեր, ձևակերպումներ, նաիվության հասնող արտահայտություններ կարելի է հանդիպել ամեն քայլափոխում։ Աշխատությունն ամբողջությամբ վերցրած չի հանդիսանում հայ ճարտարապետության զարգացման պրոցեսի բավարար սիստեմատիկ շարադրումը։ Հեղինակը չի կարողացել առանձնացնել, ընդգծել գլխավորը երկրորդականից, որի հետևանքով հայ ճարտարապետության մի շարք կարևոր հարցերը մնացել են չլուսաբանված այն ժամանակ, երբ հեղինակը երկրորդական, նույնիսկ երրորդական հարցերին, օրինակ Դվինի բլրի ստորոտին պեղումների հետևանքով բացված բնակելի տան նկարագրմանը նվիրել է մոտ 10 էջ։ Հեղինակը հաճախ գիրքը իբր թե աշխուժացնելու և դյուրըմբռնելի դարձնելու համար դիմում է զուտ բելլետրիստիկական միջոցների (օրինակ Ամբերդի նկարագրությունը, էջ 28), որը չի համապատասխանում այս բնույթի աշխատությանը։

Ինչպես ծրագրել էր հեղինակը, աշխատությունն իր բնույթով հանրամատչելի պետք է լիներ, սակայն հեղինակի նպատակադրումը՝ տալ հայ ճարտարապետության պատմությունը և լուծել մի շարք հանգուցային հարցեր, պահպանելով աշխատության այդ բնույթը, ինչպես և ավելորդ պոլեմիկան մի շարք վիճելի հարցերի շուրջը, փաստորեն ձախողում են հեղինակի նախնական մտադրությունը։ Մյուս կողմից, աշխատությունը գիտական լինելու համար էլ անհրաժեշտ խորությունն ու մշակվածությունը չունի։ Աշխատությունից չի երևում, որ հեղինակը ծանոթ է հայ ճարտարապետության վերա-

[1] Н. Я. Марр. Избранные работы, т. III, стр. 152.

բերյալ եղած հիմնական գրական աղբյուրներին. առանձնապես դա դրսևորվում է Թ. Թորամանյանի աշխատությունների նկատմամբ։ Թորամանյանի մի քանի կարևոր դրույթները հայ ճարտարապետության կազմավորման հարցերի վերաբերյալ դուրս են մնացել Տոկարսկու տեսադաշտից։ Դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ գրքում անգ են դրել ավելորդ կամ խնդրված փաստարկումներ մի քանի հարցերի կապակցությամբ օրինակ՝ գմբեթի ձևերի առաջացման վերաբերյալ), որոնք ժամանակին բացատրված են Թորամանյանի կողմից բավականին հիմնավոր կերպով (տե՛ս «Տեկորի տաճարը»)։

Տոկարսկին արհեստական անջրպետ է դնում հայ ճարտարապետության և նրա ակունքների միջև։ Նրա գրքում հայ ճարտարապետության պատմությունը փաստորեն սկսվում է վաղ քրիստոնեական շրջանի ճարտարապետությամբ, բուն որում ցույց չի տրվում, որ վերջինս առաջացավ Հայկական բարձրավանդակի նախահայկական ընթիկների (այդ թվում նաև ուրարտացիների), հայերի հեթանոսական շրջանի շինարարական կուլտուրայի (այդ թվում նաև հելլենիստական) ու Առաջավոր Արևելքի վաղ քրիստոնեական կուլտուրաների էլեմենտների սինթեզով։ Չի բացատրվում հայ ճարտարապետության այդ ակունքներից յուրաքանչյուրի դերն ու նշանակությունը։ Գրա հետևանքով քրիստոնեական շրջանի հայ ճարտարապետությունը կարված է նախորդ շրջանի ճարտարապետությունից և չի դիտվում որպես պատմական զարգացման անհրաժեշտ պրոցեսի արդյունք։

Հայկական բարձրավանդակի հնագույն մեգալիթյան և ցիկլոպյան կառուցումները, որոնք տարածված են Հայաստանում և որոնց վրա իրավացի կերպով մեծ ուշադրություն է դարձրել Թորամանյանը, անհասկանալի են Տոկարսկու կողմից։

Հակասական են նրա մոտ ուրարտական ճարտարապետության և շինարարական տեխնիկայի ժառանգության և ազդեցության հարցերը։ Խոսելով այդ մասին՝ Տոկարսկին գրում է. «Վերևում ասածից հետևում է, թե որքան հեռու են միմյանցից ուրարտացիների և հայերի հուշարձանները բնդհանուր լուծման և հարդարման տեսակետից և ինչպիսի զգուշությամբ պետք է մոտենալ ժառանգության հարցին, սիրալանքի մեջ չընկնելու համար» (էջ VI)։

Ընդհանուր առմամբ միտական վերաբերմունք հայտնելով հայ ճարտարապետության կազմավորման պրոցեսում ուրարտական ճարտարապետության և շինարարական տեխնիկայի ազդեցության հարցի վերաբերյալ, հետագայում (էջ 344) ինքն է բերում փաստեր, որոնք խոսում են այն բանի օգտին, որ պետք է կապ տեսնել վերջա հայաստանյան կառուցվածքների և հայկական միջնադարի մի շարք կարևոր հուշարձանների միջև (ստորերկրյա ճանապարհներ, դամբարանների ժայռափոր տաճարներ և այլ հուշարձանների միջև հայտնաբերում է։ Բերեմն հայերը անմասն չեն մնացել նաև ուրարտական բարեկարգությունից և շինարարական տեխնիկայի նվաճումների ժառանգությունն հարցում։ Մի հանգամանք, որը չի կարելի մեկնել, «չ պատմականորեն և «չ էլ փաստական տվյալներով նկատի ունենալով։

Բնդհանրապես այս փաստը եզրակի բնույթ չէ, միմյանց հակասող տեսակետներ հնարելի մոտ կարելի է հանդիպել նաև մի շարք այլ հարցերի վերաբերյալ։

Հայտնի է, որ հելլենիստական կուլտուրայի որոշ էլեմենտներ մտան վաղ քրիստոնեական կուլտուրայի մեջ որպես նրա բաղկացուցիչ մասը։ Հարատևությունը այդ հարցում բացառություն չի կազմել։ Դա մի շարք փաստերով կարելի է հաստատել ճարտարապետության, բանաստեղծության և գրականության բնագավառներում։ Մանավանդ Տոկարսկին խոսում է միայն հելլենիստական ազդեցության մասին, այն էլ չգիտեր ինչպես։ Հանկարծ իր անգրագիտությամբ է Հոմերին։ Հետագայում արդեն քրիստոնեական ճարտարապետության մեջ (առանց ցույց տալու որ երբվում) կարելի է հանդիպել հելլենիստական և հռոմեական ձևերի արձագանքներին։ Հեղինակը նեղություն չի կրել ցույց տալու ազդեցության բնույթի և յուրացման ու փոխներգործությունների իրական պատմական պրոցեսը։

Հայ ճարտարապետության կազմավորման առանցքային հարցերից մեկը գմբեթաճարտարապետական և կոնստրուկտիվ ձևերի մշակումն է։ Այս հարցում հեղինակը ցուցաբերել է գայրացուցիչ անփութություն և ճարտարապետական ձևերի զարգացման նկատմամբ հետազոտական մոտեցման կատարյալ բացակայություն։ Հայաստանում գմբեթի առաջացման կարևորագույն հարցին Տոկարսկին նվիրել է բառացի՝ մեկ էջ (էջ 38), որը սեղրից մինչև վերջ հակասական, խառնաշփոթ է։ Գրքերում մի կարգ որեկցի բան հանդիպում այդ չարագրանքից։ Մենք բերում ենք այդ կատարն ամբողջությամբ։ «Հայ ճարտարապետները կանգ չեն առնում այն արդյունքների վրա, որոնք ձեռք էին բերված բազիլիկան վերակառուցելով նաև։ Քաղաքակրթ գաղիճ-եկեղեցու վերածելու ուղղությամբ։ Նրանք փայլուն կերպով լուծում են նաև գմբեթով պսակված եկեղեցական շենք ստեղծելու խնդիրը։ Հազիվ թե շենքի գմբեթային ձևը մշակվել է միայն եկեղեցական շինարարության կապակ-

ցությամբ։ Միանգամայն ենթադրել, որ գմբեթի կառուցման տեխնիկան լավ ծանոթ էր ճարտարապետներին գրեթե ավելի առաջ։ Այն հանգամանքը, որ Հայաստանում առաջին 7-րդ դարից վաղ կառուցված գմբեթային շենքեր չեն հայտնաբերված, չի կարող հակառակ կարծիքի ապացույց լինել, որովհետև դժվար է ենթադրել, որ մի երկրում, որը սերտորեն կապված էր առաջնյան Պարսկաստանի հետ (ոչ միայն նրան ժամանակավորապես ենթարկված լինելու կարգով), լիմանային այն նշանավոր պալատական շենքերի մասին, որոնք կառուցված էին սասանյան տիրակալների հրամանով և որոնք մինչև այժմ կարող են հիացնել արվեստի ամենապահանջկոտ գնահատողներին։ Դեռ չի պարզված, որտե՞ղ է (Պարսկաստանում թե Հայաստանում) առաջ կիրառվել դեպի գրմբեթը կատարվող կիսակոնի ձևի կամարային փոխանցման այն յուրատեսակ ձևը, որը ճարտարապետության մեջ հայտնի է կոնական առագաստ կամ տրոմպ անվան տակ, որը միայն 7-րդ դարի կեսերին վճռականապես դուրս մղվեց արևմուտքից եկած սֆերիկ առագաստով։ Դժվար է նաև ենթադրել, որ ճարտարապետները, որոնք յուրաքանչյուր գյուղի տներում հանդիպում էին փայտյա սյուների վրա հենված վրանաձև փայտյա ծածկերի, գմբեթի մտահղացմանը չհանգեցին» (էջ 58)։

Այս ամբողջ խառնաշփոթ էջից հնարավոր չէ որևիցե եզրակացության գալ գմբեթի առաջացման վերաբերյալ։ Գմբեթի առաջացման հարցում Տոկարսկին մեղանչում է ճարտարապետության զարգացման պատմության նկատմամբ, սահմանափակելով այդ հարցը հայ-պարսկական նեղ շրջանակներով։ Սկզբում Տոկարսկին, առանց կոնկրետացնելու, թե որտեղ, որ երկրում, գտնում է այն միտքը, թե գմբեթի կառուցման տեխնիկան ծանոթ է ճարտարապետներին շատ վաղուց։ Ապա հայտնում է, որ դժվար թե Պարսկաստանի հետ սերտորեն կապված (նույնիսկ ժամանակավոր քաղաքական ենթարկվածության պայմաններում) Հայաստանում ծանոթ չլիներին նրանց պալատական շենքերի գմբեթների կառուցվածքին, իսկ այնուհետև՝ ավելորդ հաճոյախոսությամբ ավելացնում է, թե դեռևս հայտնի չէ պարսիկներն են հայերից փոխ առել, թե հայերը պարսիկներից այդ կոնստրուկտիվ ձևը, որն օգտագործվել է գմբեթում և կոչվում է կոնական առագաստ կամ տրոմպ։ Հետո կարծես մոռանալով նախորդ ասածները, հայտնում է այն միտքը, թե կարող է պատահել, որ գմբեթների մշակման վրա իրենց ազդեցությունն են թողել հայկական ժողովրդական տան ծածկի ձևերը։ Այս բոլորը զուրկ լինելով գիտական հետևողականությունից, միաժամանակ ընթերցողի մոտ տարաձայն են բերում այնպիսի խառնաշփոթություն, որը դժվար է պարզել։ Անտեսելով ճարտարապետական ձևերի օրինաչափ զարգացման պրոցեսը, հեղինակը միանգամայն մակերեսային բացատրություն է տալիս գմբեթի հնագույն ձևերին հայ ճարտարապետության զարգացման մեջ։ Գմբեթի կառուցման անցումային ձևերի ուսումնասիրության տեսակետից բացառիկ նշանակություն ունեցող Տեկորի տաճարի վերաբերյալ Տոկարսկին տալիս է հետևյալ նաիվ բացատրությունը և գրանով էլ բավարարվում։ «Այդ կառուցվածքը,— ասում է նա,— իր զարում գանազան ձևափոխություններ թիլ չի կրելու։ Վերջ ի վերջո անկարող մի ձևը պսակել է այն տձև մի գմբեթով, որը ներկայումս ավերված է» (էջ 53—54)։

Հայտնի է, որ Թորամանյանը Տեկորի տաճարին արտակարգ ուշադրություն է նվիրել, համարելով այն Հայաստանի վաղ քրիստոնեական շրջանի կարևոր եկեղեցական շենքերից մեկը, որտեղ, բացի երեքլեքիից, առաջին անգամ տեղի է ունեցել անցում բազիլիկայից գմբեթավոր ձևերին։ Դա սրահային տաճարների գմբեթավորման ամենահին օրինակն է։ Իր «Տեկորի տաճարը» հիմնավոր հետազոտության մեջ Թորամանյանը գրում է. «...5-րդ դարում հայերը թե՛ ունեցել են եկեղեցիները գմբեթավորելու ճաշակը, սակայն քարե գմբեթ չունենալու կերպը չգիտենալով՝ կշինեին եղեր փայտե գմբեթներ։ Եվ ապա— «Տեկորի տաճարի գմբեթի շինության կերպը իր շինարարական ոճով ամենանախնական արվեստագործությունը կներկայացնե և բաղդատելով գինը իր հետագա դարերու գմբեթներուն հետ, կտվորիներ, թե հայոց մեջ ինչպե՞ս է ծագեր քարե գմբեթ շինելու գաղափարը և դարե ի գար ինչպես թայլ առ թայլ առաջ գնացեր և հասեր է մինչև 13—14-րդ դարերու կատարելագործյալ գմբեթներուն ամենաշքեղ ձևերուն» (Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, էջ 205)։

Վերոհիշյալից միանգամայն ակնհայտ է, որ Տոկարսկին անհրաժեշտ հետազոտական մոտեցում չի ցուցաբերել գմբեթի հարցերին ընդհանրապես և Տեկորի տաճարի գմբեթի հարցին մասնավորապես։ Նույնպիսի հեշտությամբ նա վիճարկում է Թորամանյանի կարծիքը Էջմիածնի տաճարի կառուցման ժամանակի և նախնական ձևերի մասին, առանց բերելու թիլ թե շատ համոզիչ փաստեր։ Միանգամայն ակնհայտ է, որ Տոկարսկին այս հարցերում չի կարողացել նույնիսկ մնալ գոյություն ունեցող նվաճումների մակարդակին։

Տոկարսկին թուցիկ կերպով է անցնում հայկական ժողովրդական տան ճարտարապե-

տական ձևի շարադրության վրայով։ Այդ խնդրին նվիրելով երկու և կես էջ (1—3), հեղինակը հայկական ժողովրդական ասա հարուարապետական ձևերը բնեում է. ա) անհանելով նրանց զարգացման պրոցեսը և պատմականությունը... բ) անհանելով այդ ձևերի բնդհանրություններ ոչ միայն կովկասյան մի շարք ժողովուրդների, նախ և առաջ վրացական ժողովրդական և ադրբեջանական ասա հետ, այլև մի շարք ուրիշ ժողովրդական տեսերի հետ, որոնք բնդհանուր գծեր ունեն հայկական և վրացական տեսերի հետ։

Ինչ խոսք, որ հարուարապետական ձևերի զարգացման ուսումնասիրության այս մեթոդաստված մեթոդը, որն անհանում է հարարապետական զարգացման ասպեկտները, կոնկրետ պատմական միջավայրը և նրանցով պայմանավորված միասնական ձևերի առաջացումը տարբեր երկրներում, չի կարող բնդունելի համարվել։ Ժողովրդական տան ձևերի զարգացումը, օրինակ, Հայաստանում (գյուղատուն) և Վրաստանում (դարբազի), Ադրբեջանում (զարագամ) ցույց է տալիս տնագծագործական միասնությունն բացառիկ պայմաններ օրինակ ինչպես առաջացման պրոցեսում, այնպես էլ հետագայում, որը կարելի է ցույց տալ մեզ հասած հուշարձանների համեմատական նյութերի հիման վրա։

Տոկարսկին ոչ-հիմնավոր մոտեցում է ցուցաբերում մի քանի կարևոր հուշարձանների ժամանակը որոշելու հարցում։ Նա չի օգտագործում տվյալ հարցի համար օգնական բոլոր աղբյուրները և գերագնահատում է գեղարտիվ ձևերի նշանակությունը։ Արշակունիների Ագցում գտնվող գամբարան նա վերագրում է 4—5-րդ դարերին (էջ 49), առանց հաշվի առնելու պատմագրության մեջ պահպանված այն ստույգ տեղեկությունները, որոնց համաձայն գամբարանի կառուցման ժամանակը որոշվում է 4-րդ դարի 50—60-ական թվականները։ Եղվարդի կաթուղիկեի կառուցման ժամանակը հեղինակը համարում է մոտավորապես 5—6-րդ դարերը (էջ 57), որից երևում է, որ նա ծանոթ չէ գրականության մեջ գոյություն ունեցող այն տեղեկություններին, որոնց համաձայն Եղվարդի կաթուղիկեի կառուցումը տեղի է ունեցել Եղվարդեցի Մովսես կաթողիկոսի օրոք (577—603), որի մասին հիշատակում է Խորամանյանը մի քանի տեղամ։[1]

Գրքում չեն օգտագործված նաև նորագույն ուսումնասիրությունների տվյալները, բայց որոնց Գագեու և Օձունի տաճարների կառուցման ժամանակը սահմանվում է 6-րդ դարը, իսկ Գեղատի կաթուղիկեինը 12-րդ դարը։

Կառուցման ժամանակը պարզելու հետևանքով կամայական և միակողմանի մոտեցման [illegible] երևա օրինակ կարող են ծառայել նաև Գվինեի կաթուղիկոսարանի ժամանակի սահմանի պարզաբանությունները (էջ 44)։ [illegible] և փորագրված նախշով,— սուտ է [illegible] որը կարելի է տեսնել Երգնյաս գյուղում գտնվող 7-րդ դարի եկեղեցու [illegible] մանյաց վանքի) պատատեսակի պատի վրա սա միանգամայն հասկանալի է, քանի որ Գվինեի պալատը կառուցված է 7-րդ դարի առաջին տասնամյակից ոչ ուշ, երբ արդեն Գամիսաս կաթողիկոսի ժամանակ ավար ավելի [illegible] մայր տաճարի կառուցումը։ Վերոհիշյալ բաղադրությունը հիմնավոր համարել Ներսեսյանը չէ։ Չի կարելի առանց հաշվի առնելու պատմական [illegible] ելակետը ավելորդը։ Հուշարձանի կառուցման հարցը լուծել, հենվելով միայն տարբեր հուշարձանների վրա եղած արհամարհանքի ձևական համեմատությունից, մանավանդ հիմնավորել այդ այնպիսի մի հուշարձանի օգնությամբ, ինչպիսին է Թորգոմ [illegible] վանքը, որի կառուցման ժամանակը [illegible]

Ցավալով ասելիքից, պետք է նշել, որ գրքի հուշարձանների պատատեսակների պատերի վրա հանդիպող օրնամենտների Տոկարսկու կազմած համեմատական աղյուսակը, որը բերված է գրքում (էջ 125, 126 և [illegible]), բավական արժեքավոր մի հետազոտություն է, սակայն հեղինակը երբեմն գերագնահատում է նրա նշանակությունը հուշարձանների [illegible]ման ժամանակը որոշելու հարցում։ Ցանամենտների մշակման և գործադրության ժամանակաշրջանը հեղինակը սահմանափակում է մեկ-երկու սահմանումով, առանց ապացուցելու, որ այն կարող էր տեղի ունենալ ավելի տեսական մի ժամանակաշրջանում։ Այդ է պատճառը, որ գեղավարվելով աղյուսակով, հեղինակը երբեմն հանգում է անհիմն եզրակացությունների։

Գրքում քույլ են տրված տեսաբանության մի շարք օրինակներ։ Խոսելով Հայաստանի 5—7-րդ դարերի ճարտարապետության մասին և հատկապես կանգ առնելով բերդերի վրա, Տոկարսկին լռությամբ է անցնում պատմական այն վկայությունների վրայով, որոնք հիշատակում են և մասամբ նկարագրում այդ շրջանի բերդերը (Գառնի, Արտագերս, Անի—Կամախի, Անգեղ, Ողակաթ և այլն), սակայն հարավոր է համարում այդ բաժնում հիշատակել մի շարք ամրոցներ (Ամբերդ, Ոչնի, Տիգնիս, Կայաբերդ), որոնք բնորոշ են ավելի ուշ

1 — Խորամանյան.—Նյութեր հայ ճարտարապետության պատմության, էջ 125, 131 և 243։

ժամանակաշրջանի համար։ Որևի Տոկարսկին հյնելով այն բանից, որ հին ժամանակի բերդերը չեն պահպանվել, ստիպված է եղել օգտագործել ավելի ուշ ժամանակի նյութերը։ Սակայն այդ դեպքում նա պարտավոր էր ցույց տալ բերդերի կրած էվոլյուցիան ու ձևափոխությունները, որոնք հետևանք էին ֆեոդալական կյանքի էվոլյուցիային ու փոխակերպություններին։

Նույնը տեսնում ենք Հայաստանի 9—11-րդ դարերի ճարտարապետությանը նվիրված բաժնում։ Այստեղ հեղինակը իրավացի կերպով ցույց է տալիս կոմպլեքսային տիպի կրոնական շենքերի, վանքերի առաջացումը, սակայն խախտում է պատմականությունը և իրար հետ խառնելով, հանգամանորեն նկարագրում է տարբեր էպոխաների և տարբեր բնույթի շենքերը որպես ամբողջական կոմպլեքսներ, ինչպես, օրինակ՝ Սանահնի, Հաղպատի, Կնշառիսի և Հաղարծնի վանքերը։ Այստեղ հեղինակը հաշվի չի նստում այն կարևոր փաստի հետ, որ այդ ճարտարապետական կոմպլեքսներն իրենց վերջնական ձևավորումն են ստացել, հարստանալով մի շարք նոր տիպի շենքերով (ժամատներ, սեղանատներ, մատենադարաններ, զանգակատներ և այլն), որոնք արդյունք են արդեն 13-րդ դարի սոցիալ-քաղաքական հարաբերությունների և այդ կապակցությամբ վանքերի, որպես միջնադարի ֆեոդալական խոշոր կազմակերպությունների, կյանքում տեղի ունեցած որոշակի իրադրությունների։

Տոկարսկին չցուցաբերելով քննադատական վերաբերմունք, անվերապահորեն ընդունում է հայ կղերական պատմագրության կողմից հորինված այն տեսակետը, որով որոշ ճարտարապետական հուշարձաններ և նրանց վրա հանդիպող քանդակներն ու որմնանկարները կապվում են սուտ դավանաբանական ուղղությունների հետ։

Չի կարելի, օրինակ, համաձայնվել հեղինակի հետ, երբ նա Զվարթնոցի տաճարն ամբողջովին կապում է բաղկեդոնականության հետ (էջ 95, 100)։ Ճարտարապետական այդ նշանավոր հուշարձանն իր դրվագներով, կոնստրուկտիվ ձևերով սերտորեն կապված է տեղական, ճարտարապետական տրադիցիաների հետ, և Տոկարսկու այն պնդումը, թե Զվարթնոցի և բյուզանդական ճարտարապետության մի շարք հուշարձանների, առաջին հերթին Այա-Սոֆիայի ճարտարապետական ձևերի միջև խիստ բնդհանրություն գոյություն ունի առ այսօր, պետք է հնացած համարել։

Զվարթնոցի տաճարը իրավամբ ներկայացնում է Հայաստանի 7-րդ դարի ճարտարապետության պլուս դործոցը, այդ դարի առաջին կեսում, ճարտարապետության ասպարեզում ձեռք բերված նվաճումների հանրագումարը։ Այն հանգամանքը, որ բյուզանդական ճարտարապետության մեջ այդ տիպին անմիջապես առնչվող ոչ մի հուշարձան գոյություն չունի, իսկ Անդրկովկասում այժմ արդեն հինգն է հայտնի, իրավունք է տալիս հաստատելու այդ տիպի կառուցվածքի տեղական ծագումը։

Դավանաբանական ուղղության նշանակությունը գերագնահատված է նաև որմնանկարների հարցում։ Դավանաբանական պայքարն էլ չի կապված քաղաքական պայքարի հետ։ Հայտնի է, որ բյուզանդական կայսրությունն իր նվաճողական քաղաքականությունն իրագործելիս, կամ արդեն նվաճված ժողովուրդներին հնազանդության մեջ պահելու համար, որպես գործիք, օգտագործում էր նաև բաղկեդոնական դավանները, հակադրելով այն հայերի, ասորիների միաբնակությանը։ Միաբնակները մերժում էին պատկերները, սակայն միշտ չէ, որ այդ արգելքը խստիվ պահպանվում էր։ Պատմական այնպիսի պայմաններում, երբ բաղկեդոնականությունը և պատկերահարգությունը Հայաստանի համար քաղաքական սպառնալիք չէին, այլ ներքին դավանաբանական հարց, այդ դեպքում նրանք հանդուրժվում էին լոելյայն և եկեղեցիներում երևում էին քանդակներ ու որմնանկարներ։ Եղել են մոմենտներ (7-րդ դարի առաջին կեսում և նույն դարի 80—90-ական թվականներին), երբ բաղկեդոնականությունը գերակշռություն էր ստացել, և՞ այդ ժամանակ եկեղեցիներում որմնանկարներ և մոզաիկ պատկերներ դրվում էին։ Մյուս կողմից, սխալ կլիներ շփոթել դեպի սրբապատկերները եղած վերաբերմունքի հարցը աշխարհիկ և սիմվոլիկ բնույթի քանդակների նկատմամբ եղած վերաբերմունքի հետ։ Աշխարհիկ և սիմվոլիկ քանդակներն արգելված չէին։ Նրանց կարելի է հանդիպել Պտղնիի, Մրենի, Դվինի, Անիի 6—7-րդ դարերի հուշարձանների վրա։ Աշխարհիկ քանդակներ դրված են նաև Զվարթնոցի վրա, որի կառուցումը չարունակվել է 648 թվից հետո էլ, երբ բաղկեդոնականությունը կտրականապես մերժված էր, և պատահական չէ, որ եկեղեցու վրա դրվեցին նրա կառուցող վարպետների քանդակները, և ոչ սրբապատկերներ։ Ուրեմն որմնանկարների, մոզաիկ պատկերների և պատկերաքանդակների հարցը քննելիս պետք է նկատի ունենալ պատմական-քաղաքական իրադրությունը, պատկերների բնույթը, այս բոլորի հետ միասին նաև դավանաբանական ուղղությունը։ Կղերական պատմագրությունը ամեն

[1] Հայտնի չէ, թե ինչու դրքում չի բերված Զվարթնոցի՝ Թորամանյանի կողմից կատարված ռեկոնստրուկցիայի նկարը։

ինչ վերջինով է բացատրել Հայաստանում այժմ հայտնի է մոտ 30 հուշարձան, որոնց վրա որմնանկարներ կան և դրանք միայն դավանաբանական ուղղությամբ բացատրելը միանգամայն անհիմն կլիներ։

Տոկարսկին որոշ դեպքերում ցույցարերում է անուշադրություն իր իսկ բերած փաստերի նկատմամբ։ Խոսելով Հայաստանում պատի շարվածքի մեջ երկաթի գործադրության մասին, նա այն միտքն է հայտնում, թե Հայաստանում այդ տրադիցիան վերջանում է 7-րդ դարում (էջ 19)։ Ավելի ուշ խոսելով Հայաստանի 9—11-րդ դարերի ճարտարապետության մասին, նա հիշատակում է Ասողիկի վկայությունը Աբդինայի տաճարի կառուցման ժամանակ գործադրված երկաթե կապերի վերաբերյալ (էջ 140) և Թոմա Արծրունու վկայությունը՝ Աղթամարի կառուցումների ընթացքում գործադրված երկաթի քանակի մասին (էջ 148)։

Ի դեպ, միանգամայն անհասկանալի կերպով Վասպուրականի ճարտարապետությունը և Աղթամարի նշանավոր տաճարը, որը միաժամանակ հանդիսանում է հայկական քանդակագործության լավագույն հուշարձանը, Տոկարսկին առանձնացնում է Հայաստանի 10—11-րդ դարերի հուշարձաններից և գետեղում է տվյալ ժամանակաշրջանի ճարտարապետության առանձնահատուկ գծերի քննությանը նվիրված գլխից հետո։ Հաջորդ գլուխներում ես Վասպուրականի ճարտարապետությունը մոռացված է։

Խոսելով Հայաստանի 9—11-րդ դ. դ. ճարտարապետության մասին և ինչպես հարկն է ցույց չտալով, որ այս շրջանի ճարտարապետությունը հանդիսանում է արաբական տիրապետությամբ ընդհատված 7-րդ դարի ճարտարապետության օրգանական շարունակությունը սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների պայմաններում, Տոկարսկին հանգում է մի շարք ոչ ճիշտ եզրակացությունների։ Նրա կարծիքով, բացառությամբ Անի քաղաքի, Հայաստանի մնացած շրջաններում եկեղեցական ճարտարապետությունն ընթանում է շաբլոնի ուղիով, որը նրան տանում է դեպի անկում (էջ 186—187)։ Այս տեսակետի դեմ խիստ կերպով բողոքում են Անիից դուրս գտնվող այնպիսի հոյակապ հուշարձանները, ինչպիսիր են Ծծկոնքի, Մարմաշենի խմբերը, Տաթևի, Ոչնու, Կեչառիսի, Ամբերդի, Սանահնի Հաղպատի և այլ հուշարձանները, որոնք անշուշտ չեն կարող շաբլոնի հետևանք համարվել և իրար չեն կրկնում։ Ըստ երևույթին Տոկարսկուն անհանգստացնում է այն հանգամանքը, որ հատակագծային ձևերի մեջ այս շրջանում լական փոփոխություններ չեն կատարվում, սակայն պետք է նկատի ունենալ, որ հատակագծերի տիպերի մշակմամբ հայ եկեղեցական ճարտարապետությունը հիմնովին զբաղվեց 5—7-րդ դարերում, երբ ձևավորվեցին բազմազան տիպեր, որոնցից մի քանիսը, հատկապես գմբեթավոր սրահը, գմբեթավոր բազիլիկան, ինչպես և բազմաբսիդ տաճարները, ըստ երևույթին, իրենց ռացիոնալ և միանգամայն հարմար լուծմամբ, համապատասխանում էին եկեղեցու պահանջներին, նաև քննարկվող ժամանակաշրջանում։ Թերևս այդ է պատճառը, որ 9-րդ դարից հետո մենք չենք տեսնում հատակագծային նոր ձևերի որոնման ուղղությամբ կատարվող ճիգեր, այլ հիմնական տեղենքը ընթանում է եղած տիպերի հիման վրա պատարվող որոշ ձևափոխությունների և նոր դեկորատիվ միջոցների մշակման ուղղությամբ, որոնք համապատասխանէին ժամանակի ոգուն, պահանջներին և ճաշակին։ Այդ տեսակետից չափազանց բնորոշ է Անիի նշանավոր ճարտարապետ Տրդատի ստեղծագործությունը։

Ուրեմն չի կարելի խոսել ընդհանուր շաբլոնի մասին։ Իրավացի կլիներ ասել, որ 10—11-րդ դարերի եկեղեցական ճարտարապետության հատակագծային և կոնստրուկտիվ ձևերը կանոնիզացիայի ենթարկվեցին և այս իմաստով էլ տվյալ ժամանակաշրջանում եկեղեցական ճարտարապետությունն իր զարգացման գագաթնակետին հասնելով, դրկվեց հետագա զարգացման հեռանկարից նաև կոմպոզիցիոն իմաստով։ Հետագայում, 12—13-րդ դարերում առաջատարն արդեն աշխարհիկ ճարտարապետությունն էր, որը և հատակագծային-կոմպոզիցիոն (ժամատուն, սեղանատուն, եկեղեցական երկհարկանի շենքեր) և արտաքին ու ներքին հարդարանքի ձևեր էր տալիս եկեղեցական ճարտարապետությանը։

Պետք է նշել նաև, որ Տոկարսկին հավատարիմ չի մնում իր իսկ ընդունած սկզբունքին և 12—14-րդ դարերի ճարտարապետության վերաբերող բաժնում չի դնում այդ շրջանի ճարտարապետության բնորոշ դեմքերին վերաբերող անհրաժեշտ գլուխը։

Վերին աստիճանի մեծ չտապողականությամբ և անմշակ ձևով է շարադրված գրքի վերջին բաժինը, որը կոչվում է «Հին վարպետների շինարարական եղանակները» (приемы)։

Չի կարելի ասել, թե հեղինակին հաջողվել է ինչպես հարկն է շարադրել հայ ճարտարապետության շինարարական տեխնիկայի և արվեստի հարցերը, մանավանդ թույլ են ցույց տրված նրանց պատմական զարգացումն ու փոփոխությունները։ Տեղեկությունները թուլիկ են, մեկը մյուսի հետ չկապակցված։ Պատի և այլ կոնստրուկցիաների մասին լրիվ

պատկերացում չի ստացվում։ Դմբեթը, նրա ձևերն ու կոնստրուկցիան այս բաժնում ևս չեն ստացել իրենց բիչ թե շատ բավարար բացատրությունը։ Դրա փոխարեն միանգամայն անսպասելի կերպով հեղինակն այս բաժնում գտնելով է արևի ժամացույցի նկարագրությունը և, որ ավելի զարմանալին է, իր տեղում չքննարկված Այրիվանքի, նույնիսկ նրա շրջապատի բնության նկարագրությունը, ավելացնելով մի քանի դիտողություններ ժայռափոր տաճարների կառուցման վերաբերյալ։

Ահա սրանք են Տոկարսկու «Հայաստանի ճարտարապետությունը» աշխատության հիմնական սխալներն ու թերությունները, որոնք խիստ կերպով իջեցնում են գրքի արժեքը։

Բերված փաստերը վկայում են, որ հեղինակը չի ցուցաբերել անհրաժեշտ լրջության և պատասխանատվության զգացմունք այսպիսի մի կարևոր բնագավառին նվիրված իր սիստեմատիկ շարադրություններ կազմելիս։ Նա չի կարողացել հաղթահարել մեր ճարտարապետության պատմության մի շարք կարևոր պրոբլեմները և, որ ավելի վատն է, իր գրքում թույլ է տվել հայկական ու վրացական կուլտուրաների հակադրություն և պատմական փաստերի աղավաղում։

Այս ամենի համար, իհարկե, առաջին հերթին պետք է դատապարտել հեղինակին, սակայն կշտամբանքի արժանի են նաև հրատարակողները։ Ամեն մի աշխատություն, որը նվիրված է դեռևս վատ հետազոտված և դրժվարին ու պատասխանատու մի բնագավառի, կարող է թերություններ ունենալ, սակայն հնարավոր էր այդ թերությունները մինիմումի հասցնել, իսկ մեթոդոլոգիական սխալները կանխել, եթե Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտը ժամանակին անհրաժեշտ պատասխանատվություն ցուցաբերեր տվյալ աշխատության հրատարակման հարցում։

Ռ. ԱԹԱՔԵԼՅԱՆ
Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ